ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 19
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքը (Մայիսյան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

1. *ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքը (Մայիսյան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակի-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի (Մայիսյան բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
08-077-0018-0008 կադաստրային ծածկագրով 0.09971 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր	08-077-0018-0008 կադաստրային ծածկագրով 0.09971 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել՝ ապահովելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությամբ տրամադրված «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից ներկայացված պահանջը (կցվում է):

4. Ախուրյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Մայիսյան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի (Մայիսյան բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող		
		Դ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «15» «հունվարի» 2024 թ.